

## ԵՊՀ “Կայուն զարգացման” կենտրոնի 2013թ.-ի գործունեության ամփոփ հաշվետվություն

ԵՊՀ “Կայուն զարգացման” կենտրոնի 2013թ.-ի ծրագրում նախատեսված էր իրականացնել հետևյալ երկու նախագծերը.

- ՀՀ լեռնային արդյունաբերության տեխնաձին հանքահումքային թափոնները, խնդիրները և նրանց լուծման ուղիները:
- Անվճար ոռոգման ջրի հատկացումը որպես միջոց ՀՀ-ում ոռոգվող հողերի մշակման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

### ***Թեմա 1. ՀՀ լեռնային արդյունաբերության տեխնաձին հանքահումքային թափոնները, խնդիրները և նրանց լուծման ուղիները:***

- Նպատակն էր լեռնային արդյունաբերության գործունեության ռիսկային գործոնների դեմ պայքարի միջոցառումների շրջանակների պարզաբանում և կոնկրետ գործողությունների մշակում:
- Կենտրոնի աշխատակիցների և ընդգրկված փորձագետների օգնությամբ կատարվեց պոչամբարներին և լցակույտերին վերաբերվող հավաքագրված տեղեկատվության վերլուծություն ու պոչամբարի ծավալային մոդելավորում:
- Որոշվել է թափոնակույտերի վնասակարության աստիճանը և շրջակա միջավայրի վրա նրանց ազդեցության մեղմացման հնարավոր ուղիները: Տրվել է լեռնահանքային թափոնակույտերի հանքային ներուժի գնահատականը Ողջիի թափոնակույտի կառուցված եռաչափ (ծավալային) մոդելի և տնտեսագիտական հաշվարկների հիման վրա: Արվել են առաջարկություններ օրենսդրական դաշտում փոփոխություններ կատարելու, լեռնային ձեռնարկությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման, թափոնակույտերի խորացված ուսումնասիրությունների և նոր թափոնակույտերի ձևավորման վերաբերյալ:
- Նախագծի նպատակն իրականացված է. կատարվել է թափոնակույտերի դասակարգում և նրանց ներուժի գնահատում, կառուցվել է պոչամբարի էտալոնային եռաչափ մոդելը, տրվել են առաջարկություններ թափոնակույտերի վնասազերծման և/կամ օգտագործման նպատակով միջոցառումների կազմակերպման և նրանց իրականացման հերթականության համար:
- ՀՀ տարածքում լեռնահանքային թափոններից ամենավտանգավորն են պոչամբարները, այնուհետև արտահաշվեկշռային հանքաքարերի և վերջում մակաբացման ապարների լցակույտերը: Ըստ վտանգավորության աստիճանի ՀՀ մետաղական օգտակար հանածոների բոլոր պոչամբարները դասվում են 2-րդ և 3-րդ վտանգավորության աստիճան ունեցող խմբերին: Ողջիի պոչամբարի կառուցված եռաչափ մոդելը հնարավորություն տվեց եզրակացնել, որ պղինձ-մոլիբդենային հանքաքարերի հարստացման կոնսերվացված պոչամբարներն այսօր նպատակահարմար չէ շահագործել ի տարբերություն ավելի հարուստ, ՀՀ հյուսիսում տեղադրված պղնձի հանքաքարերի վերամշակման հարստապոչերի: Դրանով կվերացվեն նաև Ախթալայի և Շամլուղի տարածքում գտնվող պոչամբարների չափազանց վնասակար էկոլոգիական խնդիրները:

Աշխատանքի կարևորագույն և սպասելի արդյունքներից են առաջարկվող Օրենսդրական դաշտում կատարվելիք փոփոխությունները և ընդերքօգտագործման բնագավառում պետական քաղաքականության մշակումը:

- Աշխատանքի արդյունքները ուղարկվելու են շահագրգիռ պետական կառույցներին և կազմակերպություններին:

***Թեմա 2. Անվճար ոռոգման ջրի հատկացումը որպես միջոց ՀՀ-ում ոռոգվող հողերի մշակման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:***

- Գյուղատնտեսության նշանակության ոռոգելի հողատարածքների ինտենսիվ և արդյունավետ շահագործում, աղքատության նվազեցում: Հողերի մշակման արդյունավետության բարձրացման նպատակով ոռոգման ջրի օգտագործման խնդիրների ուսումնասիրում:
- Կենտրոնի աշխատակիցների և ընդգրկված փորձագետների օգնությամբ մեկ համայնքի օրինակով կատարված է հողատարածքների և նրանց ոռոգման խնդիրներին առնչվող տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:
- Ուսումնասիրվել է Արարատի մարզի համայնքներից մեկի ընդհանուր հողատարածքների մշակման աստիճանը և նրանց նպատակային օգտագործման մակարդակը: Պարզվել է, որ վերջինիս աննպատակային օգտագործումը հիմնականում պայմանավորված է ոռոգման ջրի հատկացումով. ոռոգման ջուրը տրվում է որոշակի օրերին, այն էլ ոչ բավարար քանակությամբ և ոչ հաստատուն գրաֆիկով: Ջրի համար վճարումը պահանջվում է հիմնականում հողատարածքը ջրելուց առաջ: Եվ հաճախ է պատահում, որ ոռոգման ամենաշոգ շրջանում ոռոգման ջրի հատկացումը դադարեցվում է չվճարումների պատճառով:
- Նախագիծն իրականացված է, ոլորտին առնչվող խնդիրներն ուսումնասիրվել են մանրամասնությամբ և արվել են առաջարկություններ հողերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- Աշխատանքի իրականացման կարևորագույն արդյունքներից են արված առաջարկությունները: Ոռոգման ջրի անվճար հատկացումը և հողի տուրքի ավելացումը կնպաստեն համայնքի բյուջե ներմուծվող գումարների մեծացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, կստիպեն հողերի սեփականատերերին, վարձակալներին այն արդյունավետ մշակել կամ էլ հրաժարվել հողի սեփականությունից, հանձնելով այն համայնքի տնօրինությանը, կմեծացնեն համայնքի և ղեկավարության պատասխանատվությունը ջուրը արդյունավետ օգտագործելու ուղղությամբ, կվերանան կոռուպցիոն ռիսկերը ջուր օգտագործողների միության (ՋՕՄ) աշխատանքներում, ինչպես նաև պետբյուջեից ՋՕՄ-երին հատկացվող լրավճարները (դոտացիաները):
- Աշխատանքի արդյունքները ուղարկվելու են շահագրգիռ պետական կառույցներին և կազմակերպություններին:

*Աշխատանքը կատարված է ԵՊՀ Կայուն Չարգացման Կենտրոնի կողմից, ԵԱՀԿ  
Երևանյան գրասենյակի աջակցությամբ:*

«ԿԶԿ»-ի ղեկավար  
Երկրաբանա-հանքաբանական գ. թ.

Ռ. Մովսեսյան